ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/1ՃՀ ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 10.04.2015թ. կնքված N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/1ՃՀ-2 պայմանագրում 2015թ. մայիսի 18-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	Փոփոխությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. **ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/1ՃՀ** պայմանագրով նախատեսված ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքի Մաշտոցի փողոցի 700գծմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները հնարավոր չի եղել սկսել, քանի որ այդ աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ընթացակարգը մեկ անգամ՝ 24.03.2015թ չկայացած է հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի հիմքով, այնուհետև կրկին անգամ գնման հրավերը հրապարակվել է: Գնման գործընթացը դեռևս ընթացքում է:
Փոփոխության նկարագրություն:	Պայմանագրի 2-րդ հավելված հանդիսացող Օրացուցային գրաֆիկ, ժամանկացույցը հաստատվել է նոր խմբագրությամբ:
Փոփոխության հիմնավորում:	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, համաձայն որի կառուցապատողը շինարարության ընթացքում պարտավոր է ապահովել տեխնիկական հսկողություն, և Պայմանագրի 8.4 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տիգրան Ջանոյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ tjanoyan@transportpiu.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ